

Կ-639⁴-15.10.2014-ՏՀ-010/2**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ****ՕՐԵՆՔԸ****«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության տեսչական մարմինները» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը «կամ դատարան» բառերից առաջ լրացնել «կամ «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով,» բառերով:

Հոդված 3. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով.

«6. Սույն հոդվածով նախատեսված որոշումների վերաբերյալ վերադասության կարգով ընդունված (հարկային և մաքսային մարմինների մասով՝ գանգատարկման հանձնաժողովի) որոշումները կարող են բողոքարկվել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բողոքարկման հանձնաժողով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՄՓՈՓԱԹԵՐԹ

««Տեսչական մարմինների մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,
 «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու եւ «Աշխատանքի պետական տեսչության մասին»
 Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի
 Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին»
 Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
 լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հարկային ծառայության
 մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ շահագրգիռ մարմինների
 առարկությունների և առաջարկությունների

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում նշված «9-րդ հոդվածի» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «սույն օրենքի» բառերը, քանի որ հիշյալ մասում խոսքը գնում է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի մասին	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան լրացում
2.		Նախագծի 3-րդ հոդվածում «ռիսկ» հասկացության սահմանումը, հետագայում ավելորդ շփոթմոջնքից և մեկնաբանություններից խուսափելու համար, անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 2.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հասկացությանը	Ընդունվել է	Հասկացությունը վերախմբագրվել է
3.		Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ «տեսչական մարմնի կառավարման խորհուրդ» հասկացության փոխարեն Նախագծի ամբողջ տեքստում կիրառվելու է «Խորհուրդ» հասկացությունը, մինչդեռ նույն հոդվածի 1-ին, 6-րդ եւ 7-րդ մասերում կիրառվում է «տեսչական մարմնի կառավարման խորհուրդ» հասկացությունը: Այդ առումով առաջարկում ենք Նախագծի հիշյալ հոդվածում նշված «տեսչական մարմնի կառավարման խորհուրդ» բառերը փոխարինել «Խորհուրդ» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի	Ընդունվել է	Նախագիծը խմբագրվել է

		36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միեւնույն հասկացությունը սահմանելիս կամ միեւնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Նույնը վերաբերում է նաեւ Նախագծի 11-րդ հոդվածի 9-րդ մասում, 13-րդ հոդվածի 5-րդ մասում, 18-րդ հոդվածի 6-րդ մասում նշված «տեսչական մարմնի կառավարման խորհուրդ» հասկացությանը:		
4.		Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերը կրկնում են միմյանց: Այսպես՝ նշված հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ խորհրդի աշխատակարգի օրինակելի ձեւը հաստատում է ՀՀ կառավարությունը, իսկ 6-րդ մասով նույնպես սահմանված է, որ խորհրդի աշխատակարգի օրինակելի ձեւը հաստատում է ՀՀ կառավարությունը: Այդ առումով Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ եւ 6-րդ մասերն անհրաժեշտ է խմբագրել՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:	Ընդունվել է	Հոդվածները վերախրագրվել են
5.		Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը համարվում է հայեցողական պաշտոն, մինչդեռ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասում, որտեղ սպառիչ թվարկված են հայեցողական պաշտոնները, տեսչական մարմնի ղեկավարի վերաբերյալ խոսք չկա: Այդ առումով առաջարկում ենք «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում լրացնել «տեսչական մարմնի ղեկավարը» բառերը՝ ներկայացված նախագծերի փաթեթին կցելով նաեւ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:	Ընդունվել է	Համապատասխան նախագիծը ներառվել է փաթեթում

6.		Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասում նշված «2.» թիվն անհրաժեշտ է հանել:	Ընդունվել է	Հոդվածը վերախմբագրվել է
7.		Նախագծի 3-րդ հոդվածի մասերն անհրաժեշտ է համարակալել հիմք ընդունելով իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:	Ընդունվել է	Հոդվածը համարակալվել է
8.		Նախագծի 16-րդ հոդվածի վերնագրում նշված «ստացումը» բառն անհրաժեշտ է փոխարինել «ընդունումը» բառով, քանի որ հիշյալ հոդվածում խոսքը գնում է բողոքների ընդունման մասին:	Ընդունվել է	Բառը փոխարինվել է
9.		Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ մասից առաջարկում ենք հանել «լիազոր մարմնի կազմում գործող» բառերը, քանի որ տեսչական մարմինը ստեղծվում եւ գործում է համապատասխան լիազոր մարմնի կազմում:	Ընդունվել է	Բառերը հանվել են
10.		««Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում նշված «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է	Հոդվածը վերախմբագրվել է
11.		««Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածում նշված «պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ

		Նույնը վերաբերում է նաեւ ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածին: Բացի այդ, հիշյալ նախագծում հոդվածների համարակալումն անհրաժեշտ է վերանայել, քանի որ պահպանված չէ դրանց հաջորդականությունը:		
12.		««Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագրում նշված «լրացումներ» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացում» բառով, քանի որ նախագծով կատարվում է մեկ լրացում:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
13.		Նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով սահմանվում է, որ տեսչական մարմնի ղեկավարը «օրենքով և տեսչական մարմնի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում նշանակումներ է կատարում տեսչական մամնի պաշտոններում, այդ թվում նաև քաղաքացիական ծառայության այն պաշտոններում, որոնցում չեն կատարվում նշանակումներ ՀՀ Վարչապետի կողմից, ինչպես նաև աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և պատասխանատվության միջոցներ»: Հարկ ենք համարում նշել, ու նշված դրույթը չի համապատասխանում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի գ) և 3-րդ մասին գ) կետերի պահանջներին՝ նշանակումներ կատարելու լիազորությունների մասով: Ուստի անհրաժեշտության դեպքում պետք է համապատասխան փոփոխություն կամ լրացում կատարել «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն